ցութիւնը եւ հանդուցեալ իմ հայրիկի (батюшки) թագաւոր կայսեր յարգանք եւ ջերմեռանդութիւնը՝ որ միշտ ունէին առ նա՝ շնորհակալ եմ՝ եւ զարմանալ շնորհակալ եմ՝ յուսամ եւ յայտնեսէ նոյնը եւ առ իս, վայելել ձեզ հետ բարօրութիւն եւ հանդիպել ձեզ ուրախ դէպքերում։ Պատգամաւորաց բարձր և ձիգ կէրդէնները թնդացրին դահլիճը։

Այսօր վերադառնալով իմ պատուական ուղեկիցների հետ Մոսկվա, պարտք ինձ համարեցի յանձնել այս անցքը պարբերական հրատարակութեան։

ՅԱԿՈԲ ԱԻԱԳ ԲԱՀԱՆԱՑ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ

15 Մարտի 1881 ամի

Մոսկվա։

Մարտի 9ին Պարսից Օգոստափառ Շահի հօրեղբայր Սուլթան Մուրատ Միրզա իշխանը իւր Մեքքէ ուխտագնացութենէն դարձած ժամանակ ցանկացաւ այցելել և Մայր Աթոռոյս, ուր գոհաւ և արժանավայել ընդունելութիւն։

Կէս ժամուշափ Աղդիս Վեհափառ Հայրապետի հետ տեսակցելուց ու խօսակցելուց զկնի ցանկացաւ տեսնել և Մայր Աթոռոյս Թանգարանն ու Գէորգեան ճեմարանը, որի հոյակապ դահլիճի մէջ քաղցրանուագ երգերով ընդունեցին ճեմարանի սանունքը, և ապա բազմութեամբ ուղեկիցների վերադարձաւ Երևան։ Երևանայ Նահանգապետ Նորին Գերազանցութիւն Պ. Շալիկով ըստ պետը ուղեկից էր Նորին բարձրութեան։

* * *

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ «Խորհրդածութիւն Դոկտոր Նելսըն Ամերիկացու և Ցուելուածներ» գրքոյկը՝ աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունեաց։ Սորա մասին կխօսենք Արարատի յառաջագայ համարներում զայն կարդալուց յետոյ։

* * *

Ապրիլի Արարատի մէջ Զայնագրեալ երգարանի մասին տպուած յօդուածի «Առ Ե. Ֆ. Ե.» վերնագիրը սխալմամբ բաց է թողուած։

* * *

Մեծապատիւ Գրիգոր Իզմիրեանցը ընծայեց Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանի Մատենադարանին մի «Քառարան Ռուսերէնից Գաղղիերէն և Գաղղիերէնից Ռուսերէն՝ Մակարովի» երկու հատոր՝ և մի «Քաղուածք խաչակրաց պատմագրներից՝ Հայ աղբիւրներ Դիւլորէի» որի մասին յայտնումենք հրապարակական խորին շնորհակալութիւն։